

# ԻՆՉՈ՞Ւ ՊԵՏՔ Է ԱՇԽԱՏԵՄ ՋԱՆԱՍԻՐԱԲԱՐ

Կյանքի ամենադժվար հարցերի պատասխանները - Մաս 7

«Ի՞նչ է մնում մարդիս իր բոլոր աշխատանքիցը...» Ժողովող 2:22

## ➤ Ծույլ աշխատող

«Անմիտը իր ձեռքերը գրկում է և իր միսն ուտում:» Ժողովող 4:5

## ➤ Աշխատամոլ

«Մեկը կա... նրա զբաղմունքը վերջ չունի, նաև այքը չի կշտանում հարստությունով, չի ասում թե որի համար եմ ես աշխատում և գրկում իմ հոգիին բարիքից...» Ժողովող 4:8

## Ա- Դեպի հաջողություն տանող ճանապարհը

### 1. Աշխատել խանդավառությամբ

«Ամեն ինչ որ ձեռքդ գտնի անելու, ուժովդ արա...» Ժողովող 9:10

### 2. Աշխատել ազնվությամբ

«Բարի անունը լավ է հոտավետ յուղից...» Ժողովող 7:1

### 3. Աշխատել հմտորեն

«Եթե կացինը բթացել է և նա չարի նրա բերանը, այն ժամանակ նա պետք է ուժը գորացնի, և հաջողության շահը իմաստությունն է.» Ժողովող 10:10

### 4. Աշխատել արդյունավեր

«Ամեն ձեռնարկության համար կա ճիշտ ժամանակ և իրավունք...» Ժողովող 8:6

### 5. Աշխատել համագործակցությամբ

«Երկուսը լավ է քան թե մեկը որ նրանք վարձք ունեն իրանց աշխատանքիցը: Որովհետև եթե վայր ընկնեն մեկը մյուսին վեր կկացնի. բայց վայ մեկին որ ընկնի և մի երկրորդ չկա որ նրան կանգնեցնի.» Ժողովող 4:9-10

### 6. Աշխատել համառորեն

«Առավոտանց ցանիք քո սերմը, և իրիկունը թող չդադարի քո ձեռքը, որովհետև չգիտես թե որն է հաջողվելու, սա թե նա, կամ թե երկուսն էլ միասին են լավ լինելու.» Ժողովող 11:6

## Բ- Աշխատամոլության դեմ դեղամիջոց

### ➤ Վերանայել իմ արժեքները

«Տեսա բոլոր աշխատությունը և բոլոր հաջող գործքը, որի համար մարդս նախանձում է իր ընկերին...» Ժողովող 4:4

«Մարդու համար ի՞նչ օգուտ է, որ այս ամբողջ աշխարհը շահի, բայց իր անձը կորցնի.» Մարկոս 8:36

«...մի բան վեր չի առնի իր աշխատանքիցը որ կարող էր տանել իր ձեռքին.» Ժողովող 4:6

### ➤ Վայելել իմ վարձքը

«Ամեն մարդ ուտում խմում է և իր բոլոր աշխատանքը վայելում. դա Աստծո պարգևն է.» Ժողովող 3:13

«Ավելի լավ է մի բուռ լիքը հանգստությունով քան թե երկու ավերը լիքը աշխատությունով և չարաչար հոգսերով.» Ժողովող 4:6

### ➤ Սահմանափակել իմ աշխատելը

«Հիմարի աշխատությունն իրան կհոգնեցնի, որ չգիտի քաղաքը գնալը.» Ժողովող 10:15

«Վեց օր աշխատիր և քո բոլոր գործն արա. բայց յոթերորդ օրը քո Եհովա Աստծո հանգստության օր է. ոչ մի գործ չգործես...» Ելից 20:9-10

«Չուր է ձեզ համար կանուխ վերկենալը՝ ուշ հանգստանալը, դուք որ հացը ցավով եք ուտում. ինչու որ նա իր սիրելիին քուն է տալիս.» Սաղմոս 127:2

### ➤ Ակնկալել Աստծո հոգածությունը

«Ուրեմն հոգ մի՛ արեք ասելով՝ ի՞նչ ենք ուտելու կամ ի՞նչ ենք խմելու կամ ի՞նչ ենք հագնելու: Որովհետև այդ ամենը հեթանոսներն են փնտրում. որովհետև ձեր երկնավոր Հայրը գիտե, որ այդ ամենը պետք են ձեզ.» Մատթեոս 6:31-32

### ➤ Փոխանակել իմ ճնշումները Աստծո խաղաղությամբ

(Հիսուս) «Ինձ մոտ եկեք բոլոր հոգնածներ ու բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ... Որովհետև իմ լուծը քաղցր է, և իմ բեռը՝ թեթև.» Մատթեոս 11:28, 30

Հաջորդ Քարոզի Թեման:  
«Ինչպե՞ս Պետք է Դիմագրավեմ Ապագան»  
Հովիվ Սարո Խաչիկեան